

**ԱՌՈՓԱՆՈՒԹՅՈՒՆ – ԻՄԱՍՏ ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԱՎՈՐ
ԽՈՍՔՈՒՄ
Խաժակյան Մ. Գ.**

Հայտնի է, որ խոսքային ներգործումն անհնար է անջատել առողջանությունից: Խոսքի միևնույն բառային և իմաստային բեռնվածության պայմաններում միայն առողջանությունն է ցույց տալիս հենց այն իմաստը, որն առաջնային է, այսինքն՝ հաղորդակցման մեջ հաճախ ոչ խոսքային իմաստն առավել մեծ կարևորություն է ձեռք բերում: Ամեն դեպքում, անորոշությունից, անհարմար իրադրություններից խուսափելու համար անհրաժեշտ է ճիշտ մեկնաբանել խոսքը, և, որ ամենակարևորն է, վերջինիս իրադրային ուղղվածությունը: Առողջանությունը ոչ միայն ընդլայնում է խոսքի իմաստը, այլև վերջինիս հաղորդում է առանձնահատուկ նրբերանգներ:

Բանալի բառեր. առողջանություն, ձայն, ձայնաձայլ, տեմպ, տեմբր, դադար, իմաստ:

Նախաբան: Վերջին տասնամյակներում բազմաթիվ ուսումնասիրություններ են արվել առողջանությանն առնչվող խնդիրների հետ կապված: Առավել արդիական են դարձել հատկապես այն ուսումնասիրությունները, որոնք տարվում են գործաբանական հիմքի վրա՝ կարևորելով խոսքային ներգործման խնդիրը և, որ առավել կարևոր է, մարդկային գործոնը: Հայտնի է, որ խոսքային ներգործումն անհնար է անջատել առողջանությունից: Այս հիմքի վրա էլ առաջացել է հնչագործաբանությունը, որը հատկապես լայն ուշադրության է արժանանում վերջին տարիներին: Գործաբանական լեզվաբանության հիմնական խնդիրը, ըստ Լ. Ֆոմիչենկոյի, խոսքի օրինաչափությունների բացահայտումն է, որոնք կիրառվում են հասարակության և առանձին անհատների կողմից մարդու մտքի, զգացմունքների և հոգեկան աշխարհի վրա ազդելու համար, որը վերջնական արդյունքում ազդե-

ցություն է գործում մարդկանց վարքագծի վրա: Բանախոսը փորձում է ներգործել լսարանի վրա, իսկ լսարանը գնահատողական վերաբերմունք է դրսևորում բանախոսի նկատմամբ՝ կարևորելով, թե ինչ է ասում բանախոսը, ինչպես է ասում, և թե ինչպիսին է հենց իր՝ ելույթ ունեցողի կերպարը: Այդ գնահատականից է կախված այն, թե որքանով կրնդունվի կամ կմերժվի առաջարկվող տեղեկատվությունը, որքանով հաղորդվող տեղեկատվությունը կազդի ունկնդրի դիրքորոշման, հետագա գործողությունների վրա և այլն: Հաշվի առնելով բառային և շարահյուսական միջոցների կարևորությունը՝ անհրաժեշտ է նշել առոգանության առանձնահատուկ դերը խոսքային գործաբանության ձևավորման գործում: Բանախոսի ճիշտ ու հստակ առոգանությամբ լսարանի վրա ներգործող հնչող խոսքի բովանդակության վերաբերյալ որոշակի վերաբերմունքի ձևավորումը մեծապես կարևոր է խոսքի ընկալման համար [13]:

Լինելով հարաբերականորեն նոր՝ գործաբանական լեզվաբանությանը համահունչ ուղղություն՝ հնչագործաբանությունն առաջացել է հնչյունաբանության և գործաբանության հիմքի վրա և ընդգծում է արտալեզվական գործոնի կարևորությունը: Գործաբանության կարգի ներգրավումը հնչյունաբանության մեջ վկայում է ոչ միայն հնչյունաբանական հետազոտությունների դաշտն ընդլայնելու, այլև ասույթի կառուցվածքային և խորքային ոլորտները թափանցելու և ունկնդրի վրա ներգործելու մակերեսային և խորքային մեխանիզմները բացահայտելու հնարավորության մասին: Այդ առումով առոգանության դերն անգնահատելի է:

Անտիկ շրջանի հռետորները գնահատում էին ոչ միայն խոսքի բովանդակությունը տրամաբանորեն կառուցելու ունակությունը, այլև հատուկ ուշադրություն էին դարձնում հնչող խոսքին՝ ամեն տեսակի ռիթմային կառույցներին, տոնի բարձրության փոփոխությանը, հնչյունի արտաբերման ուժգնացմանն ու թուլացմանը, տեմպի արագացմանն ու դանդաղեցմանը, դադարներին, տրամաբանական շեշտին [11]:

Կարևորվում է նաև հնչող խոսքի գնահատումը այն ընկալող սուբյեկտի կողմից՝ ելնելով այն բանից, թե որքանով գեղագիտորեն հաճելի տպավորություն է ստեղծվում հնչող տեքստն ընկալելիս, ինչքանով նշանակալից և տեղեկատվական է տեքստի իմաստը, և որքանով է այն համապատասխանում արտահայտված հույզերին, որոնք դրսևորվում են կիրառված հնչյուններով, տեքստի առոգանությամբ,

խոսքային ձայնի որակներով, քանի որ հենց այս համապատասխանությունն է, որ ավելի հաճելի է դարձնում ընկալման գործընթացը:

Միանգամայն հնարավոր է, որ տարբեր հասցեագրողներ տարբեր հանգամանքներում միևնույն բառերն օգտագործելիս նկատի ունենան տարբեր երևույթներ: Իսկ այն բոլոր հարցերին, թե ինչպես է դա հնարավոր, և թե որն է կոնկրետ բառիմաստի, խոսքի որոշակի հանգամանքների, բառն արտաբերելիս խոսողի նկատի ունեցած իմաստի, նրա մտադրությունների, գործողությունների և արդյունքում արտահայտված մտքի միջև եղած կապը, պատասխանում է գործաբանությունը (<http://plato.stanford.edu/entries/pragmatics/>): Որպեսզի հասցեագրողն ու հասցեատերը տվյալ հաղորդակցական իրավիճակում իրար ճիշտ հասկանան, անհրաժեշտ է, որ նրանք ոչ միայն տիրապետեն խոսքի քերականական, բառային և իմաստային կառույցներին, այլև այդ գիտելիքներն ընկալեն առոգանության հիմքի վրա՝ գործաբանական առումով: Ստացվում է, որ խոսքի այն իմաստը, որն առաջնային է հասցեագրողի համար, լիարժեքորեն հասնում է հասցեատիրոջը: Ուրեմն, կարևորվում է ոչ թե այն, թե ինչ է ասվում, այլ այն, թե ինչպես է ասվում: Այսինքն՝ կարևորվում է խոսքի գործաբանական ուղղվածությունը: Ընդ որում՝ խոսողը նախապես պլանավորում է, թե ինչ ազդեցություն է գործելու իր խոսքը հասցեատիրոջ վրա, այսինքն՝ նա կարող է նաև կռահել, թե ինչպիսին կլինի հասցեատիրոջ արձագանքը: Այս պարագայում դժվար է ասել, թե հասարակական խոսքում որ գործառույթն է գերիշխող՝ հաղորդման, թե՞ ներգործման (հարցի հնչագործաբանական հայեցակերպի հետ կապված (տե՛ս 9-10):

Ներկայումս կարծիք կա, որ մեղեդայնության միջոցով հնարավոր է վեր հանել խոսքում արտահայտված իմաստի և իրադրությամբ պայմանավորված նախադրյալների, ինչպես նաև հաղորդակցման կոնկրետ իրադրության մեջ խոսակիցների հաղորդակցական մտադրությունների միջև եղած առնչությունները և դրանց տարբերակիչ հատկանիշները [8]:

Առոգանության շնորհիվ տարբերվում են խոսքային միավորների այս կամ այն իմաստները, իսկ բանավոր խոսքի արտահայտչականությունը պայմանավորված է արտահայտչամիջոցների և առոգանության փոխազդեցությամբ: Չի կարելի անտեսել առոգանության դերը, քանի որ հատկապես վերջինիս շնորհիվ է, որ հասցեագրողի խոսքը լիարժեքորեն հասնում է հասցեատիրոջը:

Վ. Արտյոմովը առողջանությունը համարում է հենք, որի վրա ասեղնագործվում են հնչերանգն ու բառը [8]:

Խոսքում գործածվող առողջանական միջոցները լսարանի վրա ներգործելու հնարավորություն են ստեղծում և անգամ կարող են փոխել լսողների անձնական կողմնորոշումը: Նման ներգործումը շատ հաճախ կանխամտածված բնույթ է կրում և որպես վերջնանպատակ ծառայում է մատուցված տեղեկատվության նկատմամբ որոշակի վերաբերմունքի ձևավորմանը [9-10]: Առողջանական միջոցների հմուտ կիրառության շնորհիվ է միայն, որ հաջողվում է կոնկրետ իրադրությունում լիարժեք ներգործում իրացնել՝ հիմնական շեշտը դնելով հենակետային, այսինքն՝ կարևորագույն տեղեկատվություն կրող բառերի վրա:

Առողջանությամբ կարելի է դատել խոսողի մասին՝ նրա խառնվածքի, մտածողական ընդունակության, տրամադրության: Առողջանության միջոցով բանախոսին հաջողվում է հասցեատիրոջը հասանելի դարձնել բառերով չարտահայտված իմաստը, ինչպես նաև հաղորդակից դարձնել իր մտորումներին ու մեկնաբանություններին: Առողջանությունը ոչ միայն ընդլայնում է խոսքի իմաստը, այլև վերջինիս հաղորդում է առանձնահատուկ նրբերանգներ: Միննույն բառը կարող է արտաբերվել բազում ձևերով: Սովորական *բարև* բառը, ինչպես նշում է Ի. Անդրոնիկովը, կարելի է ասել չարամտորեն, կտրուկ, մտերմիկ, չոր, մռայլ, քնքուշ, անտարբեր, անհամարձակ, ամբարտավան, ինքնահավան և այլ ձևերով (<http://www.scienceforum.ru/2014/pdf/1002.pdf>):

Առողջաբանական բազմազանության շնորհիվ գրավոր խոսքի համեմատ կտրուկ աճում է բանավոր խոսքի արտահայտչականությունը մտքեր, զգացմունքներ և տրամադրություն հաղորդելիս: Ինչպես նշում է Բեռնարդ Շոուն, գոյություն ունի *այո* կամ *ոչ* ասելու հիսուն, սակայն դրանք գրելու՝ ընդամենը մեկ եղանակ (<http://www.scienceforum.ru/2014/562/1155>): Իսկ ըստ Դ. Քրիսթըլի՝ դեռևս ոչ ոքի չի հաջողվել նկարագրել հնչերանգով արտահայտված իմաստի բոլոր նրբերանգները [2-5]:

Դադարը առողջաբանական բաղադրիչների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում: Գործառական առումով լինելով վերհատույթային երևույթ՝ ֆիզիկապես այն յուրահատուկ՝ *դատարկ տարածություն* է [12], որը, սակայն, բանավոր խոսքում միշտ կարելի է *լցնել* դիմախաղով, հայացքով, ժեստով, ինտենսիվ շարժումներով և այլն: Այն հասցեագրողին թույլ է տալիս հավաքել մտքերը և խոսքն ավելի նպատակային դարձնել, իսկ հասցեատիրոջը՝ ժամանակ ունենալ

ասվածի ուղղվածությունն ու իմաստը լավ ըմբռնելու համար: Ավելի հաճախ այն բնութագրվում է որպես արտասանական ժամանակավոր դադար: Ինչպես Կիպլինգն է նշում, դադարներով կարելի է խոսել (http://www.edgarcaysi.narod.ru/karnegi_kv_6.html): Ճիշտ և տեղին արված դադարները բանախոսի վարպետության մասին են վկայում:

Հրապարակային խոսքի՝ որպես բանավոր հաղորդակցության միջոցի հաջողությունը ևս մեծ մասամբ կախված է առոգաբանական ձևավորումից, քանի որ, ինչպես բազմիցս հաստատվել է, բանավոր խոսքում բովանդակության ճիշտ մեկնաբանումը լսարանի կողմից իրականացվում է հատկապես առոգանության միջոցով:

Հրապարակային ելույթներում առատ են այն բառերը, որոնք առանձնանում են հուզական-արտահայտչական շեշտադրությամբ: Ըստ Լ. Վ. Շչերբայի՝ հուզական-արտահայտչական շեշտադրումը խոսքին հաղորդում է վերաբերմունքային երանգ, որով էլ նյութականանում է խոսողի դրական կամ բացասական վերաբերմունքը այս կամ այն երևույթի նկատմամբ [14]: Հուզական-արտահայտչական շեշտադրությունը հաճախ օգտագործվում է հակադրությունն ընդգծելու համար: Այն, անկասկած, ազդում է հիմնական տոնի հաճախության, տևողության և ուժգնության փոփոխության վրա:

Քաղաքական խոսքի նպատակը քաղաքական իշխանության նվաճումն ու պահպանումն է: Լեզվաբանական գրականության մեջ քաղաքական խոսքը ներկայացվում է որպես բազմակողմանի և բազմապլանային երևույթ (Շեյգալ, Բառանով, Յուդինա, Կոստոմարով և այլք): Վ. Ջ. Դեմյանկովը գտնում է, որ քաղաքական խոսքը, որը գտնվում է զիտության տարբեր ճյուղերի հատման կետում (քաղաքագիտություն, սոցիալական հոգեբանություն, լեզվաբանություն, հանրալեզվաբանություն և այլն), ուսումնասիրության բարդ առարկա է և կապված է քաղաքական խոսքի ձևի, խնդրի և բովանդակության հետ, որն օգտագործվում է որոշակի *քաղաքական* իրադրություններում: Քաղաքական խոսքի ընդհանուր բնութագիրն օգնում է սահմանել դրա առանձնահատկություններն ու գործառույթները:

Քաղաքական գործիչներին հատուկ է հռետորական պատկերավոր արտահայտությունների հաճախակի կիրառումը հատկապես կարևոր տեղեկատվությունն ընդգծելու նպատակով, որպեսզի այն հասանելի լինի ունկնդիրների առավել լայն շրջանակի, որպեսզի կարողանան գրավել նրանց ուշադրությունը, կապ հաստատեն լսարանի հետ, վերջինիս նկատմամբ համակրանք դրսևորեն, ինչպես նաև ասվածն ամ-

րապնդեն ունկնդրի գիտակցության մեջ: Նրանց խոսքը նաև հարուստ է հռետորական հարցերով, որով խոսողը հրավիրում է ունկնդրին կիսելու իր մտահոգությունը գոյություն ունեցող հարցերի առնչությամբ, ուշադրություն դարձնելու որոշակի մտքերի, գաղափարների և այլն:

Բոլոր նշված առանձնահատկությունները բնորոշում և բնութագրում են հռետորի խոսքը մեծ արտահայտչականությամբ: Նրանց ելույթները հաճախ ուղղված են հասցեատիրոջ զգացմունքներին, որոնք էլ ազդեցություն են ապահովում բանականության ու գիտակցության վրա: Որպեսզի խոսքն իր նպատակին ծառայի, այն պետք է աչքի ընկնի ճիշտ և գեղեցիկ առոգանությամբ, գեղեցիկ և լիարժեք հնչողությամբ: Ելույթի մեղեդայնությունը, խոսքի արտահայտչականությունը հնարավորություն են տալիս հուզականորեն գրավել ունկնդրին, նպաստել ասելիքի բովանդակության ընկալմանը և ոչ թե քննադատական մոտեցմանը:

Երբեմն խոսքին բնականություն հաղորդելու կամ ուշադրությունը կարևոր մտքերի վրա սևեռելու նպատակով ելույթ ունեցողը դիմում է դադարների օգնությանը:

Այս տիրույթում առոգանությունն առանձնահատուկ դերակատարություն ունի:

Բրազան և Մարկեսը կենտրոնացել են այն բանի վրա, թե քաղաքական քննարկումների ժամանակ ինչպես են առոգանական միջոցները նպաստում ունկնդրի ուշադրությունը կենտրոնացնելուն և ուղերձի մեկնաբանմանը [1]: Մոցիկոնաչին լայն առումով քննության է առնում առոգանության այնպիսի առնչություններ և հարաբերություններ, որոնք ներազդում են իրականացնում: Ասելու ձևը ներառում է առոգանությունը՝ շեշտը, տոնային առանձնահատկությունները, խոսքի տեմպը, դադարները և այլն, իսկ խոսքի հուզական երանգավորումն արտահայտվում է *ուրախությամբ, տխրությամբ, զայրույթով, հուզմունքով* և այլն [6]: Ինքնադրսևորման օրինակներ են հանդգնությունը, անկեղծ հուզական դիմումը և այլն: Բացի այդ, հռետորը կարող է կիրառել այլ տրամաբանական և հռետորական միջոցներ: Առոգաբանական բոլոր այս միջոցները խոսքը դարձնում են բարդ, բազմազան և հզոր հաղորդակցական զենք: Անկասկած, հասարակական տիրույթում առավել մշակված խոսք է պահանջվում: Խոսողի համար խիստ կարևորվում են հստակ արտասանությունը, ձայնի բավարար ծավալը, ձայնի ուժգնության տատանումները, ոչ միապաղաղ տոնը, ճիշտ շեշտադրումներն ու դադարները, խոսքի

համապատասխան տեմպը, սահունությունը, առոգանական բազմազանությունը, արտահայտչականությունը: Անձնային որակներում կարևորվում են խոսողի ներգրավվածությունը, խանդավառությունը, խոսողի անձնական գրավչությունը, հանդարտ, հավասարակշիռ խոսքը, անհատականությունը, դրական վերաբերմունքը, հումորի զգացումը, ինքնավստահությունը, համոզվածությունը: Խոսողը պետք է կարողանա կապ հաստատել ունկնդրի հետ, վերջինիս նկատմամբ պետք է լինի զգայուն, հարգալից, այլ ոչ թե իր տեսակետը պարտադրող:

Քաղաքական գործչի խնդիրն է ելույթի ընթացքում լսարանին ոչ միայն տեղեկատվություն հաղորդել հասարակական կյանքի այս կամ այն երևույթի մասին, այլև, որ ավելի կարևոր է, համոզել ունկնդրին ընդունել այս կամ այն դիրքորոշումը և ստանալ քաղաքացիների աջակցությունը: Ըստ էության՝ քաղաքական ելույթն ունի որոշակի իշխանամետության ենթատեքստ: Հոետորը նպատակ ունի շահել ունկնդիրների վստահությունը, որով էլ որոշվում են ելույթի հիմնական գործառույթներն ու իրականացման միջոցները: Ինչպես պատկերավոր կերպով ներկայացնում է Հ. Ապրեսյանը, չնայած հոետորը բանաստեղծ և նկարիչ է, նա իր խոսքը ընթերցանության չպետք է վերածի, այլ պետք է աշխատի խոսքի բարեհունչության, սեփական ձայնի ճիշտ կիրառման, բառերի իմաստները չաղավաղելու և հստակ արտաբերելու վրա: Ինչպես գրիչը բանաստեղծի զենքն է, այնպես էլ ձայնը՝ հոետորի [7]:

Քաղաքական ելույթը հատկապես կարևորվում է, քանի որ առաջատար քաղաքական գործիչների հասարակական գործունեությունը միշտ առանձնահատուկ դեր է կատարել հասարակության կյանքում: Որոշակի քաղաքական դիրքորոշումից և իրադրությունից է կախված երկրի դերը միջազգային ասպարեզում, նրա փոխհարաբերությունները այլ պետությունների հետ, նրա դերը համաշխարհային հասարակայնության գործունեության մեջ: Երկրի դիմագիծը որոշելու հարցում մեծ դերակատարություն ունեն քաղաքական առաջնորդները: Ելույթների միջոցով քաղաքական գործիչները հնարավորություն են ունենում դիմել ինչպես իրենց երկրի քաղաքացիներին, այնպես էլ միջազգային հանրությանը:

Դիտարկենք Բ. Օբամայի 2011թ. մայիսի 25-ի ելույթից մի հատված՝ ուղղված Բրիտանիայի խորհրդարանին (ելույթն ամբողջությամբ տե՛ս հետևյալ հղումով՝

<https://www.americanrhetoric.com/speeches/barackobama/barackobama-british-parliament.htm>):

Ելույթը նախ և առաջ ուշագրավ է նրանով, որ Բ. Օբաման առաջին ամերիկացի նախագահն է, որին մեծագույն պատիվ է շնորհվել Ուեսթմինսթերյան դահլիճից դիմելու Բրիտանիայի խորհրդարանին: Բ. Օբաման, հիշատակելով նախկինում այդ պատվին արժանացած գործիչներին անունները, հումորով նշում է, որ սա կա՛մ շատ բարձր նշաձող է, կա՛մ էլ մի շատ զվարճալի կատակի սկիզբ՝ *'I 'have ,known / 'few 'greater ,honors / than the oppor'tunity to address / the 'Mother of ,Parliaments / at 'Westminster ,Hall. // I am 'told that the ,last / three ,speakers here have 'been the ,Pope, / Her 'Majesty the ,Queen, / and 'Nelson Man, dela – which is 'either 'a 'very 'high ,bar / or the be'ginning of a very funny ,joke.* Ելույթի սկիզբն արդեն իսկ հաջողված է և աշխարհի ամենախիստ լսարանը՝ թիրախավորված: Հասցեատիրոջ դրական նախատրամադրվածությունն արդեն իսկ ապահովված է: Ամբողջ դահլիճը բուռն արձագանքում է: Դիմախաղի միջոցով իր գոհունակությունն է արտահայտում նաև ելույթ ունեցողը: Նրա ինքնավստահ խոսքը, հստակ շեշտադրումներն ու դադարները, խոսքին կշիռ հաղորդող վարընթաց տոները վստահություն ու հարգանք են ներշնչում աշխարհի ամենաքմահաճ լսարանին, որին գրեթե անհնար է գոհացնել:

Նա փորձում է բազմիցս ընդգծել այն փաստը, որ այդ երկու երկրների միջև գոյություն ունեցող կապը ամենահինն է, ամենաամուրը, որ աշխարհը երբևէ ճանաչել է: Դա առանձնահատուկ բարեկամություն է (*'a 'special re ,lationship*), իսկ երբ որևէ աննշան լարվածություն է առաջանում, այն անմիջապես քննարկման ու վերլուծության առարկա է դառնում՝ բացառելու հետագա բացասական զարգացումները: Բանախոսի ելույթում գերիշխող են վարընթաց տոները, սակայն *✓overanalyzed* բառն արտաբերելով վարընթաց-վերընթաց տոնով՝ նա փորձում է ընդգծել այն հանգամանքը, թե որքան կարևոր են այդ հարաբերություններն իրենց համար՝ փորձելով հասկացնել հասցեատիրոջը, որ դրանք հավասարապես կարևոր են նրանց համար ևս, և որ նրանք նույնպես պետք է փորձեն փայփայել այդ հարաբերությունները: Բ. Օբաման հիշատակում է նաև որոշ անհաջողություններ իրենց հարաբերություններում՝ *Of course, 'all re' lationships have their 'ups and ,downs. // ✓Admittedly, ours got off on the wrong ,foot with a small 'scrape about 'tea and ,taxes. // There →may ,also have 'been some 'hurt ,feelings / when the 'White 'House was 'set on ,fire during the War of 1812. // But 'fortunately, / it's been 'smooth 'sailing ever since.* Վարընթաց-վերընթաց տոնով

արտաբերելով *admittedly* բառը՝ նա լսելի է դարձնում այն, որ այդ վայրիվերումների պատճառը հենց Բրիտանիան է եղել, սակայն ասելիքը մեղմում է հավասար տոնի կիրառությամբ՝ → *may*, այնուհետև խոսքին հումորային երանգ հաղորդելով՝ նշում է, որ 1812 թ. պատերազմից ի վեր նրանց բարեկամությունը սահուն ընթացք է ունեցել: Մահուն առողջանական անցումների շնորհիվ հմուտ ճառասացին հաջողվում է պահպանել լսարանի մոտ արդեն իսկ ձևավորված դրական վերաբերմունքը:

Ի թիվս բազում ընդհանրությունների (լեզու, մշակույթ, գործընկերային հարաբերություններ և այլն)՝ բանախոսը հատկապես ընդգծում է, որ իրենց բարեկամությունը, շնորհիվ ընդհանուր հավատի և արժեքների, դարեր ի վեր միավորել է երկու ժողովուրդներին՝ *Our relationship is special & because of the values & and beliefs that have united our people through the ages*, որն ավելի համոզիչ է հնչում բարձր վարընթաց տոնի կիրառության շնորհիվ:

Նա հատուկ անդրադարձ է կատարում Ազատությունների մեծ խարտիային՝ կարևորելով վերջինիս դերը մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների հարցում՝ նշելով, որ դրանից հատկապես ներշնչվել են Ատլանտյան օվկիանոսից այն կողմ գտնվող վերաբնակիչները: Հղում կատարելով Ուիլսոնի Չերչիլին՝ նշում է՝ ...Magna Carta, the Bill of Rights, Habeas Corpus, trial by jury, and English common law find their most famous expression | in the American Declaration of Independence: Հստորեն փառաբանելով բրիտանացիներին, միաժամանակ ընդգծելով նաև իր երկրի հզորությունը՝ աստիճանաբար ամրապնդում է իր դիրքերը: Բրիտանական խորհրդարանը քար լուծությամբ և ամենայն ուշադրությամբ հետևում է նրա ամեն մի բառին: Սա այն արտալեզվական հիմքն է, որը Օբամային ինքնավստահություն է ներշնչում: Նա իր ելույթում որևէ խտրականություն չի դնում հասարակության ամենատարբեր խավերը ներկայացնող անդամների միջև: Շեշտադրվում է այն միտքը, որ հատկապես Ամերիկյան և Բրիտանիան պետք է աջակցեն այնպիսի արժեքների տարածմանը, ինչպիսիք են հանդուրժողականությունը, ինքնորոշումը, որոնք հանգեցնում են խաղաղության ու արժանապատվության, նա ընդգծում է այն գաղափարը, որ ԱՄՆ-ի և Եվրոպայի միջև դաշինքը շարունակելու է ձևավորել այնպիսի աշխարհ, որտեղ կարևորվում և սրբորեն պահպանվում են մարդկային ազատությունն ու արժանապատվությունը, իսկ նման ձգտումը ո՛չ ամերիկյան է, ո՛չ

բրիտանական, ո՛չ էլ արևմտյան. այն համամարդկային է, այն դիպչում է շատերի սրտերին, այն հնարավորություն է տալիս ազգերին ծաղկել ու բարգավաճել: Նրա միտքն առավել համոզիչ է հնչում հստակ շեշտադրումների, դադարների և վարընթաց տոների կիրառությամբ: Շարունակելով՝ Օբաման կարևորում է նաև դաշնակից երկրների դերը տևական խաղաղության հաստատման հարցում:

Օբամայի այս ելույթը հնչագործաբանական և առոգաբանական տեսանկյունից փայլուն ելույթ է: Ասելիքը հստակ հասնում է նպատակակետին: Նրա խոսքը կշռադատված է և ինքնավստահ: Թե՛ արծարծված թեմաները (տնտեսությանն առնչվող հարցեր, միջուկային զենքի տարածում, կրթություն և այլն) և թե՛ նրա խոսքի տոնայնությունը հարիր են հմուտ, հեռատես, հզոր պետական գործչին: Օբամայի այս ելույթում կա ն՛ ուժ, և՛ զսպվածություն, և՛ ջերմություն, և՛ ակնհայտ դրսևորված հարգանք: Նրա հաջողության պերճախոս վկայությունը բրիտանական խորհրդարանի հոտնկայս ծափահարություններն ու ժպիտներն են:

Եզրակացություն: Այսպիսով՝ քաղաքական ճառը համոզիչ խոսքի արվեստ է, որին կարելի է հասնել պատկերավոր արտահայտությունների, ինչպես նաև առոգանական հատուկ միջոցների կիրառությամբ: Քաղաքական ճառերին բնորոշ է հուզականությունը, քանի որ իրենց նպատակին հասնելու, ինչպես նաև ունկնդրի վրա ուժեղ տպավորություն գործելու համար քաղաքական գործիչները բառերն ու նախադասությունները օգտագործում են՝ ունկնդրին ծառայեցնելով սեփական նպատակներին: Հենակետային բառերի շեշտադրությամբ, ինչպես նաև համապատասխան առոգանության կիրառմամբ՝ խոսքը բանախոսի համար դառնում է հզոր զենք՝ սեփական նպատակներին հասնելու գործում:

Հարկ է մեկ անգամ ևս ընդգծել, որ վերոհիշյալ ոճում կարևորվում են ն՛ հաղորդման, և՛ ներգործման գործառույթները, սակայն ներգործման գործառույթն այստեղ որոշակիորեն գերիշխող-տիրապետող է և միևնույն ժամանակ հաղորդման գործառույթի հետ միասին կազմում է մեկ ընդհանուր հակադրամիասնություն, այսինքն՝ մեկն առանց մյուսի չի կարող գոյություն ունենալ հրապարակախոսական ոճում: Իսկ ինչ վերաբերում է արտասանական կոնտուրին, հաղորդման գործառույթ իրականացնելիս այն չեզոք է, այսինքն՝ այստեղ գերիշխող է չեզոք առոգանությունը, իսկ ներգործման գործառույթն իրականացնելիս առաջին պլան է մղվում հուզական/արտահայտիչ առոգանությունը, որը

դուրս է գալիս շարահյուսական առոգարանության սահմաններից՝ ներառելով փոխաբերական խոսքը, խոսողի մտադրությունը, շարժանիքը և զգացմունքները:

ВЗАИМОДЕЙСТВИЕ И ЗНАЧЕНИЕ ПРОСОДИИ В УСТНОЙ РЕЧИ

Хажакян М. Г.

Статья посвящена исследованию просодических средств в устной речи. В любой речи все просодические средства взаимосвязаны, и любое изменение в одном из них может иметь прямое влияние на другие, что приводит к множеству семантических изменений на уровне восприятия. Просодия имеет очень важное значение в восприятии речи. Любая речь доходит до адресата с помощью внешних импульсов (в рамках нашей статьи этим импульсом является просодия) и чрезвычайно сложных механизмов обработки информации на уровне восприятия. Анализ воздействия с помощью просодических средств в рамках политической речи показывает, что когнитивная значимость просодии приобретает еще и функциональный характер.

Ключевые слова: просодия, звук речи, диапазон, темп, тембр, пауза, значение.

THE INTERACTION BETWEEN PROSODY AND MEANING IN ORAL SPEECH

Khazhakyan M. G.

The article is devoted to the study of prosodic means in oral speech. In any speech, all prosodic means are interconnected, and any change in one of them can have a direct impact on the others, thus leading to many semantic changes at the level of perception. The role of prosody is invaluable. Any speech reaches the addressee with the help of external impulses (this impulse, in the scope of our article, is prosody) and extremely complex information-processing mechanisms at the level of perception. The analysis of the interaction of prosodic means within the framework of political speeches shows that the cognitive significance of prosody may assume a functional character as well.

Keywords: prosody, speech sound, range, tempo, timbre, pause, meaning.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Braga D. & Marques M. A. The Pragmatics of Prosodic Features in the Political Debate. Experimental Phonetics Laboratory (www.ilch.uminho.pt/lfe) University of Minho, Portugal <<http://isle.illinois.edu/sprosig/sp2004/PDF/Braga-Marques.pdf> >
2. Crystal D., Davy D. Investigating English Style. Harlow: Longman. 1995. 264 p.
3. Crystal D. A Dictionary of Linguistics and Phonetics. 6th ed. Malden, Blackwell Publishing Ltd © 2008. 555 p.
4. Crystal D. The Cambridge Encyclopedia of the English Language. Second Edition. Cambridge, Cambridge University Press. 2009. 499 p.
5. Crystal D. Prosodic Systems and Intonation in English. Cambridge University Press, Cambridge, 2011, 390 p.
6. Mozziconacci S. Prosody and Emotions. Phonetics Lab. Netherlands. Leiden University.
<<https://pdfs.semanticscholar.org/d978/5cdad45e6791a0672279c4f906b35b5c888b.pdf>>
7. Апресян Г. З. Ораторское искусство. М. Изд-во Московского университета. 1968. 160 с.
8. Бурая Е. А. Фонетика современного английского языка. Теоретический курс: учебник для студ. учреждений высш. проф. образования / Е. А. Бурая, И. Е. Галочкина, Т. И. Шевченко. 4-е изд., испр. и доп. М.: Издательский центр «Академия». 2014. 288 с.
9. Демина М. А. Фонопрагматика как новое направление в лингвистике // Вестник МГЛУ. 2011. Выпуск 1 (687). С. 95-105 (Copyright 2016) <<file:///C:/Users/User/Desktop/Folders/Phonopragmatics/fonopragmatika-kak-novoe-napravlenie-v-lingvistike.pdf> >
10. Демина М. А. Фонопрагматический подход к анализу дискурса теленовостей // Вестник МГЛУ. 2014. Выпуск 1 (687). С. 76-87 (Copyright 2016) <<file:///C:/Users/User/Desktop/Folders/Phonopragmatics/fonopragmaticheskiy-podhod-k-analizu-diskursa-telenovostey.pdf>>
11. Рождественский Ю. В. Теория риторики. М.: Добросвет. 1997. 597 с.
12. Светозарова Н. Д. Интонационная система русского языка. Ленинград . Изд.-во Ленинградского ун-та. 1982. 176 с.

13. Фомиченко Л. Г. Просодическая реализация коммуникативных функций сообщения и воздействия в английской монологической речи. Дисс. канд. филол. наук. Москва, 1985. 244 с.
14. Щерба Л. В. Фонетика французского языка. Очерк французского произношения в сравнении с русским. М. Изд-во 7, Высшая школа. 1974. 308 с.

Տեղեկություններ հեղինակի մասին

Խաժակյան Մ. Գ. – բանասիրական գիտությունների թեկնածու

Երևանի պետական համալսարան

Էլ. փոստ՝ Mariamkhazhakyana@rambler.ru

Տրվել է խմբագրություն 17.10.2019